

Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանին
Վանաձորի Աղայան Ե-2/24 հասցեի բնակիչ,
Երկիր Մեդիա ՀՀ, hetq.am, news.am, asparez.am
կայքերի թղթակից
Գայանե Սարգսյանից
077296657, sgayane20@mail.ru

Տեղեկատվության հարցում

Հարգելի պրն. Նալբանդյան

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1. ՀՀ կառավարության կողմից Լոռու մարզի քամուց տուժած բնակիչներին հասցված վնասի փոխհատուցման նպատակով որպես պետական աջակցություն ստացված գումարի բաշխումն ըստ համայնքների՝ ամբողջական ցանկը

2. Ձորագյուղ համայնքին հատկացված գումարից աջակցություն ստացած բնակիչների ցանկը՝ ըստ կրած վնասի ու հատկացման չափի:

3. Որ կառույցի, որ վարչության կամ բաժնի կողմից է վերահսկվել համայնքներում բնակիչներին տրված հատկացումների օրինականությունը. արդյո՞ք դրանք օբյեկտիվորեն են բաշխվել, արդյո՞ք աջակցությունը չի հատկացվել չտուժած բնակչին կամ աջակցության չափն արդյո՞ք չի գերազանցել կրած վնասի չափը: Եթե նման ուսումնասիրություն-եզրակացություն կա, խնդրում եմ տրամադրել նաև այդ տեղեկատվությունը ընդհանրապես և Ձորագյուղի մասով մասնավորապես:

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալ եմ Գ. Սարգսյան

1.03.2016թ. 

